Ո՞վ է կանգնած Բաքվին վարկաբեկող տեղեկույթի արտահոսքի ետևում

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 27.03.2024թ.

Կիևի և Բաքվի մինչ այժմ սահուն ընթացող հարաբերություններում սկսեցին հայտնվել առաջին կնճիռները:

Եթե դրանց առաջ գալու նախաձեռնությունը չի բխում Ուկրաինայի ղեկավարությունից, ինչպես դա կարող է թվալ առաջին հայացքից, ապա ակնհայտ է, որ Կիևին հովանավորող աշխարհաքաղաքական կենտրոններից որևիցե մեկին անհրաժեշտ էր կռվեցնել Ուկրաինային ու Ադրբեջանին, միգուցե, նաև տարանջատել՝ նրանց մղելով բարիկադների հակառակ կողմեր:

2024 թ. մարտի 24-ին ուկրաինական իշխանամետ ԶԼՄ-ների հրապարակումներից հայտնի դարձավ, որ Բաքուն փաստացի զենք ու զինամթերք է մատակարարել Ուկրաինայի ԶՈՒ-ին 2022 թ. փետրվարին Ուկրաինայում ՌԴ ԶՈ-ի ռազմական գործողության մեկնարկից հետո: Խոսքը Կիևի և Բաքվի միջև սպառազինությունների պայմանագրերի կատարման և դրանց վճարման հետ կապված ինչ-որ հայցերի վերաբերյալ դատական փաստաթղթերի հրապարակման մասին է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այստեսակ տեղեկատվությունը երկու պետությունների համար էլ ապրիորի առանձնահատուկ նշանակություն ունի և հրապարակման ենթակա չէ, իսկ դրա պատահական արտահոսքը բացառվում է, դա նշանակում է, որ խոսքը կանխամտածված «արտահոսքի» մասին է:

Փաստորեն, խոսք կարող է լինել Բաքվի վրա տեղեկատվական հարձակման մասին՝ նպատակ ունենալով վարկաբեկել Ալիևի՝ որպես «դաշնակցի» իմիջը թե՛ ուկրաինական, թե՛ ռուսական հանրության, ինչպես նաև այս երկրներում նրան նկատմամբ լոյալ քաղաքական խմբերի աչքում: Տվյալների արտահոսքը ցույց է տալիս որոշ ուժերի մտադրությունները՝ տապալելու Ալիևի ռեժիմի՝ Ուկրաինային և Ռուսաստանին զուգահեռաբար, բազմակողմանի ցուցաբերվող աջակցության խաղը, ինչն ուղղված է ԱդրՀ-ի համար հաղթական դիրքեր նվաճելուն՝ անկախ ուկրաինական պատերազմի ելքից և դրանից բխող աշխարհաքաղաքական դասավորումներից:

Ըստ որոշ դիտարկումների՝ վերոնշյալ տեղեկատվական-քարոզչական կոմբինացիայի ետևում կարող է կանգնած լինել Ֆրանսիան, որի իշխանությունները, իբր խնդրել են Կիևի իրենց գործընկերներին Բաքվից առանձնանալու քայլեր ձեռնարկել: Այս տարբերակը կարող է վստահելի լինելու իրավունք ունենալ՝ հաշվի առնելով, առաջին հերթին, Փարիզի աճող ազդեցությունը Կիևի վրա՝ ֆրանսիական ստորաբաժանումներն Օդեսա տեղափոխելու և Փարիզի կողմից Ուկրաինային հատկացվող ռազմատեխնիկական և ֆինանսական օգնության ծավալներն ավելացնելու մասին

տեղեկությունների ֆոնին: Եվ երկրորդ, ֆրանս-ադրբեջանական հայտնի քաղաքական և դիվանագիտական սկանդալներից հետո հենց Մակրոնն ունի լիարժեք դրդապատճառ Ալիևի վարչակարգը վարկաբեկելու և Բաքվի ցուցաբերած *«հավասարակշռված քաղաքականությունը»* ժխտելու աշխարհի համար դյուրազգայուն ուկրաինական հարցում: Ուստի, Ադրբեջանի վրա ֆրանսիական ճնշման մեծացման դիտարկվող գործընթացի համատեքստում Ռուսաստանից Բաքվին «կտրելու» միջոցառումները միանգամայն տրամաբանական և սպասելի են: